Հ. Մ. ՔԵՆԴԵՐՅԱՆ, Հովհաճ Մայրագոմեցի, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1973, 133 էջ

Դրախոսվող դրքում քննվում է Հովհան Մայրագոմեցու կյանքը, գործը, ապրած ժամանակաշրջանը և գրական ժառանգությունը։ Հեղինակը իրավացիորեն նկատել է, որ Հովհան Մայրագոմեցուն հիշաաակող աղբյուրները շատ են, բայց նրա գործունեության մասին եղած տեղեկությունները՝ քիչ։ Այդ իսկ պատճառով ավելի մեծ դեր է հատկացվում բանասիրական աշխատանքին՝ առկա կցկտուր տվյալներից և հակասական ենթադրություններից ճշմարիտ եզրահանգումներ կատարելու համար։ Հեղինակին հաջողվել է ձեռագիր աղբյուրների օգտագործմամբ ճշտել Հովհան Մայրադոմեցու ապրած ժամանակաշրջանը և նրա կյանքը լուսաբանող մի շարք կարևոր հարցեր։ Սույն քննությամբ ապացուցվում է, որ Հովհան Մայրագոմեցին ապրել է VII դ. առաջին կեսին և նրա մականունը եղել է ոչ թե Մայրիվանեցի, այլ՝ Մայրագոմեցի։ Նաև ցույց է տրվում, որ Հովհան Մայրագոմեցին եղել է բեղուն ու եռանդուն գործիչ և ունեցել է բազմաթիվ աշակերտներ։

Հ. Քենդերյանը հատուկ ուշադրություն. է նվիրել Հովհան Մայրադոմեցու անվամբ հայտնի աղանդի հետ կապված հարցերին, գտնելով, որ այդ աղանդի հիմնադիրն ու գաղափարախոսը եղել է նրա աշակերտ Սարգիսը։

Հ. Քենդերյանի քննության հիմնական առարկան «Խրատ վարուց» ժողովածուն է՝ բաղկացած 26 ճառից, մեկական ոդբից և աղոթքից։ Ինչպես հայտնի է, երկար ժամանակ այդ ժողովածուն վերագրվել է V դ. նշանավոր գործիչ Հովհան Մանդակունուն։ Ճիշտ է, 1913 թ. Կարապետ եպիսկոպոսը հիմնավորեց կարծիք՝ հօգուտ Հովհան Մայրադոմեցու և շատերն ընդունեցին այն, սակայն նույնիսկ հիմա էլ որոշ բանասերներ «Խրատ վարուցի» ճառերը վերագրում են Հովհան Մանդակունուն։

Հ. Քենդերյանը հարուստ փաստերով հավաստում է, որ «Խրատ վարուցը» իրոք VII դ. գրական հուշարձան է և պատկանում է Հովհան Մայրագոմեցու գրչին։ Չնայած նա ևս գտնում է, որ այն լեզվամտածողական առումով ընդհանրություններ ունի V դ. գրականության հետ, սակայն մատնացույց է անում համանման երկերի առկայությունը նաև VII դ.։ Դրանցից են Կոմիտաս Կաթողիկոսի «Անձինք նուիրեալքը», Անանիա Շիրակացու երկերը, Սեբեոսի «Պատմությունը» և այլն։

Աշխատության հեղինակը ճառերի բովանդակությունը բաժանում է չորս խմբի։ Այդ առթիվ նա գրում է. «Ժողովածուն խոր ու ինքնատիպ մտածողի, գործչի ու գրողի կուռ ու ամբողջական աշխարհայացքի արտահայտություն է, ժամանակի, հասարակության, կյանքի ու մահվան, ճակատագրի, ազատության և այլ խնդիրների գնահատությունը, որ արտացոլվել է ճառերի չորս խմբերի միջոցով։ Դրանք են՝ ա) ճառեր մեղքերի (ախտերի), բ) բնության և գերբնական երևույթների, դ) առաքինության և դ) փրկության միջոցների մասին» (էջ 71)։

Մեծ է Հովհան Մայրադոմեցու ճառերի ճանաչողական նշանակությունը։ Նրանցում տեսնում ենք VII դ. հայ կյանքի տարբեր կողմերն ու հասարակական շարիքի այլազան արտահայտությունները։

Մարդկային կյանքի շարիքներից մեկը, ըստ Հովհան Մայրադոմեցու, վաշխառությունն է։ Նրա համոզմամբ վաշխառուն զուրկ է մարդկային զգացմունքներից, անգութ է։

Հովհան Մայրագոմեցին Եզնիկ Կողբացու նման պայքարել է կախարդության ամենատարբեր արտահայտությունների դեմ։ Նա իր մեծ նախորդի նման գտնում էր, որ կախարդությունն ու գիտությունը անհարիր են։

Հ. Քենդերյանը Հովհան Մայրադոմեցու ճառերի կապակցությամբ քննում է միջնադարի հայ գրականության այնպիսի ժանրերի գրականագիտական սահմանումները, ինչպիսիք են՝ ճառը, թուղթը և կանոնը։ Նա իրավացիորեն նկատում է, որ Հովհան Մայրադոմեցու ճառերում միաժամանակ կան վերոհիշյալ երեք ժանրերի տարրերը։ Մենագրության հեղինակը «Պիտոյից գրքում» եղած խրատի ու եղծման սահմանումներն ու սխեմաները համադրել է «Խրատ վարուցում» եղած ճառերի սխեմաներին և ի հայտ բերել համապատասխանություն։

Որպես ընթերցողի և ունկնդրի վրա ազդելու կարևոր միջոց. ինչպես նշում է Հ. Քենդերյանը, Հովհան Մայրագոմեցին իր ճառերում օգտագործել է նաև ինքնախարազանումը, որը գալիս է դեռևս V դ. ապաշխարության շարականներից։

Ուսումնասիրության վերջում Հ. Քենդերյանն անդրադառնում է Հովհան Մայրագոմեցու չափածո ողբին, ինում նրա հետ կապվող տաղաչափական հարցերը, տալիս ողբի պոետիկական առանձնահատկությունները։ Շահեկան կլիներ, եթե ուսումնասիրության վերջում, հավելվածի կարգով, դրվեր ողբի բնագիրը։

Այս ուսումնասիրությամբ Հ. Քենդերյանը միջնադարյան ճառագրության «շատ խոպան տարածություններ ունեցող անդաստանում» բացել է մի ակոս։ Բանասիրական և գրականագիտական քննություններով Հ. Քենդերյանը կարողացել է առաջին անգամ ստեղծել Հովհան Մայրագոմեցու մասին մի ամբողջական ուսումնասիրություն, որը բավարար հիմք է նրա «խրատ վարուց» ժողովածուի բնագրի գիտա-քննական բնագիրը ստեղծելու և առհասարակ հայ ճառագրության քննությունն ավելի խորացնելու։

Ա. Գ. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու